

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 4-ին Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանի մոտ քաղաքացիների հերթական ընդունելությունը կայացավ:

Ընդունելության էր ներկայացել 54 քաղաքացի: Նրանց հիմնական մասը կա՛մ դրամական աջակցություն, կա՛մ աշխատանք էր խնդրում: Բավարվել է 28 հոգու՝ դրամական օգնություն ստանալու դիմումը, 2 հոգու աշխատանքի տեղավորման հարցը: Ընդունելության եկած եւս 24 հոգու ներկայացրած խնդիրը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի, եւ մարզպետարանի ստորաբաժանումների կողմից ուսումնասիրվելուց հետո դրանց պատասխան կտրվի: